

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը  | Միջոցառման անվանումը   | Օրը          | Ժամը  | Անցկացման վայրը   |
|-----------|------------------------|--------------|-------|---|
| Թումանյան | Ավագանու արտահերթ նիստ | 10.02.2020թ. | 14:00 | Թումանյա համայնքի ք.Թումանյանի մշակույթի պալատի Սմարթ սենյակում |

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ՝ ԺԱՄԸ 14.00-ԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԺԱՄԸ՝ 14.00

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Զավարյան

2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ

2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Զավարյան

3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ.Ե.Շաքարյան

ՆԱԽԱԳԻԾ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝  
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի արտահերթ նիստի  
օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ  
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Լ.Զավարյան

2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի <<ԹՈՒՄԱՆՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ. Զավարյան

3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ.Ե.Շաքարյան

ՆԱԽԱԳԻԾ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի «ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թումանյան համայնքի 2020թ.բյուջեի վարչական մասի ընթացիկ ծախսերում կատարել

հետևյալ փոփոխությունները ըստ ոլորտների՝

Բաժին(Ոլորտ)4.Տնտեսական հարաբերություններ.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Ճանապարհային տրանսպորտ:

Ավելացնել ճանապարհային տրանսպորտի միջոցառումների համար նախատեսված

«Դրամաշնորհներ ոչ առևտրային կազմակերպություններին» (հոդվ.4637) ծախսը 1000.0 հազ.

դրամով.

2. Թումանյան համայնքի 2020թ.բյուջեի ֆոնդային մասի կապիտալ ծախսերում կատարել

հետևյալ փոփոխությունները ըստ ոլորտների՝

1) Բաժին(Ոլորտ)4.Տնտեսական հարաբերություններ.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Գազաֆիկացիա:

Նախատեսել <<Շենքերի և շինությունների կառուցման>> (հոդվ.5112) համար 3390.0 հազ. դրամ ծախս.

2) Բաժին(Ոլորտ)6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն.

Ծրագիր 01.

Միջոցառումներ: Բնակարանային շինարարություն:

Նախատեսել <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման>> (հոդվ.5113) համար 1600.0 հազ. դրամ ծախս.

Ծրագիր 02. Զրամատակարարում:

Միջոցառումներ 1: Նախատեսել <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման>>

(հոդվ.5113) համար 13892.9 հազ. դրամ ծախս.

Միջոցառումներ 2: <<Նախատեսել նախագծահետազոտական ծախսեր>> (հոդվ.5134)

890.1 հազ. դրամ ծախս.

Ծրագիր 03. Փողոցների լուսավորում:

Միջոցառումներ 1: Նախատեսել <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման>>

(հոդվ.5113) համար 7887.5 հազ. դրամ ծախս.

Միջոցառումներ 2: <<Նախատեսել նախագծահետազոտական ծախսեր>> (հոդվ.5134)

381.5 հազ. դրամ ծախս.

3. Հիմնական խմբին չդասվող պահուստային ֆոնդից պակասեցնել 8554.924 հազ. դրամ: Վերը նշված ոլորտներում համապատասխան միջոցառումները իրականացնելու համար, միաժամանակ պահուստային ֆոնդից հատկացված գումարից 7554.924 հազ. դրամը տրամադրել ֆոնդային բյուջեի միջոցառումների իրականացմանը:

4. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը գումարով՝ 10093.693.3 հազ. ՀՀ դրամը տեղափոխել բյուջեի ֆոնդային մաս, ֆոնդային մասի ժամանակավոր ազատ մնացորդի՝ 10393.383.2 հազ. ՀՀ դրամ գումարի հետ միասին ապահովել կապիտալ ծրագրերի իրականացումը:

**ՆԱԽԱԳԻԾ**  
*ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՄԱՍԻՆ  
/ԶԵԿ.ԵՐՎԱՆԴ ՇԱՔԱՐՅԱՆ /*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019թ. հունվարի 31-ի N 62-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման» կարգի 31.01.2019թ. 62-Ն որոշման N 1 հավելվածի և 06.11.2006թ. N 170-Ն որոշման N 2 հավելվածի, ինչպես նաև ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին 16 նոյեմբերի 2006 թվականի N 1708-Ն որոշումը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքում սուբվենցիոն ծրագրերն իրականացնելու համար համայնքի ֆոնդային բյուջեից հատկացնել 16.755.274 ՀՀ դրամ, որից.

1) Համայնքի Շամուտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի հիմնանորոգման համար հատկացնել 5.609.800 ՀՀ դրամ /սուբվենցիոն ծրագրի գումարը կազմում է 16.028.000 ՀՀ դրամ/,

- 2) Համայնքի Աթան բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի հիմնանորոգման համար հատկացնել 5.636.470 ՀՀ դրամ /սուբվենցիոն ծրագրի գումարը կազմում է 16.104.200 ՀՀ դրամ/,
- 3) Համայնքի բոլոր բնակավայրերի փողոցների լուսավորության ընդլայնման համար հատկացնել 5.509.004 ՀՀ դրամ /սուբվենցիոն ծրագրի գումարը կազմում է 13.772.511 ՀՀ դրամ/: